ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Փէրիան (Ֆէրէյդան), որ Պարսկա — Հնդկաստանի Թեմի ամենահայաշատ և ընդարձակ գաւառն է (որպէս Ատրպատականի Թեմում Սալմաստը), ձգւած է Պարսկաստանի Սպահան քաղաքին կից, Նոր-Ջուղայից մօտաւորապէս 24 ֆարսախ հեռու, արևմտեան կողմը, մի ընդարձակ տարածութեան վրայ։ Բաղկացած է բազմաթիւ հայաբնակ, պարսկաբնակ և մահմեդական վրացի (գուրջի)* գիւղերից, որոնցից Դարան գիւղը գաւառապետանիստ է, ուր գաւառապետներն ամառն են միայն պաշտօնավարում։

Սահմանները։ Նրա բնական սահմաններն են.— Արեւելից՝ Քեաբանդ գաւառը Արեւմուտից՝ Բուրբարի (Բսրբորուտ)։ Հիւսիսից՝ Գոլփայեգան, Խոնսար և Դէհաղ. Հարաւից՝ Բախտեարի լեռնաշղթան։

Բնական կազմութիւն։ Գաւառն իր բնական կազմութեամբ ներկայացնում է մի խիստ գեղեցիկ պատկեր. հրսկայ լեռների և լեռնաշղթաների, վիթխարի սարերի, ժայռերի և բլուրների, ընդարձակ արօտաւէտ լեռնադաշտերի ու միմեանց յաջորդող խորունկ ձորերի, քարանձաւների և լայն ու նեղ հովիտների մի տարածութիւն է դա, ուր աջ ու ձախ՝ սարերի լանջերին, ձորակներում, ժայռերի կից, բլուրների կրծքին, հովիտների և ընդարձակ դաշտավայրերի վրայ փռւած են մեծ ու փոքր գիւղեր, որոնք զարդարւած են կանաչազարդ արտերով, ուռենիներով և բարդիներով, հաճելի սիզաւէտ արօտներով, գեղեցիկ, նկարչական այգիներով, ղուլալ ու վճիտ գետերով, անուշահամ առուներով, սառնորակ—կաթնահամ աղբիւրներով և կանաչազարդ սարերով, ուր ձիւնը մնում է մինչև ամառը և միայն Յունիս, Յուլիս ամիսներում հալւելով վազում է հարիւրաւոր լեռնալանջերից և ձորերից ու կազմում կարկաչուն առւակներ և գետակներ, որոնք իրենց հանդարտ ընթացքով պտոյտներ

* Որոնք բռնութեամբ մահմեդականացած վրացիներ են։